ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ N ՄՇԴ-277-2025 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «10» «11» 2025թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայ Արտ» մշակութային հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող նախագահ Շահեն Նազարենկո, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով ժամանակակից արվեստի և գրահրատարակչության վարչության 2025 թ. նոյեմբերի 6-ի N Ն/13/28009-2025 զեկուցագրի և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի մայիսի 26-ի N 1228-Ա/2 հրամանով հաստատված «Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում» դրամաշնորհի հատկացման մրցույթի մասնագիտական խմբի 2025 թվականի նոյեմբերի 4-ի նիստի N 7 արձանագրությունը, ինչպես նաև 2025 թվականի օգոստոսի 1-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» դրամաշնորհի հատկացման N ՄՇԴ-277-2025 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 9.3 կետը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ի 3.4 ենթակետում «ՀՀ Շիրակի մարզ» բառերը փոխարինել «ՀՀ Արագածոտնի մարզ» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է երկու թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական մարմին՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039097
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն՝

«Հայ Արտ» մշակութային ՀԿ
Ք. Երևան, Ռաֆֆու 99/1.1
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050922152221001
ՀՎՀՀ 01298546
Հեռ.՝ 091 43 33 44

Նախագահ՝

_____ Ն. Նազարենկո
(ստորագրություն)

Կ.Տ